ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 16 » նոյեմբերի 2023թ. № **134-Ա**

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿԱԲԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 80 դրական եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2023 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 01/111.6/07442-2023 գրությունը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սպիտակ համայնքի Ծաղկաբեր բնակավայրում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-049-0076-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,14577 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նշանակության հողամասի:

2. Սպիտակ համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել համապատասխան փոփոխություն:

ԿՈՂՄ (14) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆՈՒՆԵ ԷՀՏԻԲԱՐՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԱՍԱՏՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳԱՍՈՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՆՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ

ՍԱՍՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ _____Ա.ՄԱԹՈՍՅԱՆ

2023թ. նոյեմբերի 16
ք. Սպիտակ